4329

2004

667-ԱՀ 4330

# ՀԱՄԱՌՕՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԵԱՆ

՚Ի պէտս աշակերտաց համօրէն դպրոցաց հայկ ազգին մերոյ, և այլոց ընթերցասէր անձանց.

՚Ի Հայրապետութեան Գերագահ Աթոռոյն Սուրբ Էջմիածնի Տն ԵՓՐԵՄԻ Սրբազնասուրբ Կաթողիկոսի ամ Հայոց.

Յառաջնորդութեան հիւսիսական Հայոց Տեառն ՅՈՎՀԱՆՆՈՒ Սրբազան Արք Եպիսկոպոսի.

Աշխատասիրեալ ՚ի Տէրտացու Գաբրիէլէ Վարժապետեան Պատկանեանց, յՈսուցչէ Մայր Դպրոցի Աստրախանայ, և ՚ի Հայոց Հոգևոր Կոնսիստորի Ատենադպրէ.

Հրամանաւ Կառավարչական Հոգևոր Բարեկարգութեան.
՚Ի Տպարանի Սրբոյ Էջմիածնի.
ՅԱՍՏՐԱԽԱՆ. 1821

(տես Զարբ.-յան)

29702-63

1821

# ՆԱԽԱՇԱՒԻՂ

[illegible]

[illegible]

[illegible]

# Խաչատրոյ առ Մեսրոպեան Համբակի ։

՚Ի տուն փառաց՝ փութա՛ համբակ՝ ընդ երգովքն,
առնուլ պսակ՝ զուարթութեան՝ վերնականին ։

Գումարք դասուց՝ ընտիր պարուց՝ լեալ կաթոգքն,
ուրախութք՝ փութան առնուն՝ և կաթոգնին ։

Այլ քո՛ նախնիք՝ ընդ անյագուրդ՝ ախորժակին,
զդափնեդեալ՝ պսակ գլխոյդ՝ բոլորեցին ։

Բարի զբարին՝ յաման ընտիր՝ աւանդեցին,
և զխոտանն՝ զփշալիցն՝ բաց մերժեցին ։

Րոտեալ զհետ՝ կրկնակուղի՝ ճանապարհին,
ածաւանդ՝ հնոյ և նորոյ՝ կտակարանին ։

՚Ի որք տառից՝ ներբողեալ սն՝ գերդաստանին,
զնմանութ՝ ընծաներալ բնաւ՝ յինքեննս բերին ։

Ե՞ր է այս՝ հետևողեդ՝ շաւղաց նոցին,
խոտորել յայնց՝ որք պարգևաց՝ գանձարանին ։

Լինել մշակ՝ զաւուրն ողջոյն՝ բարձող դառին,
՚ի ժամ վարձուց՝ զրկիլ յարդենց՝ ընդ առակին ։

Է՛ աստ աՀա՝ անաչառ տէրն՝ անդաստանին,
որ փոյթ մուծցէ՝ զքեզ ՚ի յարկ՝ որք պսակին ։

# ՀԱՄԱՌՕՏ

# ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

# ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԵԱՆ.

ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԵԱՆ վարդապետութիւն է հրահանգումն իմն պատուական, զի 'ի սկզբանց առ յԱյ յայտնելոց եկեղեցւոյ՝ հանէ անվրէպ զզանազան եզրակացութիւս, որովք տայ մեզ իմաստ ճանաչել զԱծ, և վարել ըստ նորին պատգամաց.

Եւ քանզի առ այս ծանօթութիւն բերիմք՝ մերթ 'ի բնութենէ, և մերթ յԱծային յայտնութենէ. վնկ և վարդապետութիւնս այս գլխաւորաբար բաժանի յերկուս մասունս, յԱծգիտութիւն բնական, և յԱստուածաբանութիւն յայտնական.

# ԳԼՈՒԽ Ա.
## Յաղագս Բնական Աստուածգիտութենէ.

Հարց. Զի՞նչ ուսուցանէ բնական Աստուածգիտութիւն.

Պատ. Բնական Աստուածգիտութիւն ցուցանէ Ա. զգոյութիւն Այ. Բ. զէութիւն նր. և Գ. զկատարեալ Աստուածպաշտութիւն։

---

### Յօդուած. Ա.
### Յաղագս Գոյութեան Այ.

Հարց. Արդեօք գո՞յ Ած, և ո՞ է այն.

Պատ. Այո՛, քանզի ինքն յայտնեաց մեզ զինքն, յասելն. Ես եմ որ էն. և առաքեալն ասէ՝ Հաւատալ արժան է այնմ՝ որ մերձենայ առ Ած, թէ է՛ Ած. ուստի Ած է այն էակ, որ զմեզ և զաշխարհս ամենայն ստեղծ, և զամ ինչ յայսմ աշխարհի ուղղէ.

Հարց. Ուստի՞ ցուցանի գոյութիւն Այ.

Պատ. Գոյութիւն Այ հաստատի 'ի ճանաչելոյ զմեզ ինքեանս. զի յորժամ մեք զմտաւ ածեմք՝ թէ զմեզ ստեղծանել ո՛չ կարեմք, եզրա

կացուցանեմք՝ թէ է՛ ուրեք էակ ինչ, յորմէ մեք ամենեքին, և այլ ամ արարածք գոյացաք.

Հարց: Զի՞նչ ևս հաւաստարիմ տանէ մեզ զգոյութիւն այս.

Պատ: ՚Բնութիւն կարգի աշխարհաց. քանզի յորժամ տեսանեմք ՚ի ամենքին յերկինս՝ զարեգակն, և ՚ի գիշերի՝ զլուսին և զաստեղս ՚ի կարգաւոր ընթացս իւրեանց հաստատեալ. և յերկրի՝ զդալարիս, զծուրս և զկենդանիս ՚ի պաշտօն մեր արարեալ. զհողմս և զանձրև՝ ՚ի բարեխառնութիւն օդոց, և պտղոց երկրի կարգեալ. զորս մարդ զօրութեամբ իւրով ո՛չ կարէ գոյացուցանել. հետևեցուցանեմք՝ թէ է՛ այլ էակ իմն, որ զայս ամ կերտեաց, և զամ ինչ բարւոք մատակարարէ.

Հարց. Միաբա՞ն են այսմ ամ փիլիսոփայք.

Պատ. Ո՛չ. քանզի դէմոկրատէս և Եպիկուրոս, և հետևողք նոցին՝ ՚ի զուգընթացութիւն հիւլէից

ծղլին զգոյանալն հոգւոյ. բայց կը կերոն սասաց ըղէմ նոյ, թէ զի որդ ապա այսու անխտիր խառ-նուրդ հիւլէից ոչ գործեցան ա-պարանք, և ոչ գոյացաւ բանա հիւսիւթի. որով ցուցանէ՝ թէ է՛ ուրեմն այնպիսի էակ՝ որ զա մենայն գոյացոյց։

## Յօդուած. Է.

## Յաղագս էութեան այ.

**Հարց.** Զի՞նչ է ած.

**Պատ.** Նա է էակ՝ գերագոյն քան զամ էակս, անեղ, ինքնագոյ և յաւ-իտենական։

**Հարց.** Զի՞նչ ցուցանեն ստորոգելիքս այսոքիկ.

**Պատ.** Թէ ած է մի՝ զի յինքենէ է. անսկիզբն և անեղ, զի յանձնէ է, և յումեքէ ոչ սկսաւ. ան-վախճան և անեղծ, զի սպառել ոչ ունի, ուղ և ոչ զսկիզբն նո գիտէ ոք. վնյ և ասի յաւիտե-նական։

Հարց. Սատի զի՞նչ հետևի։

Պատ. Թէ ած է անսկիզբն, զի ինքն
է ամի սկիզբն. քանզի ստեղծ
ած զայս աշխհ, և զամ արարածս
որ ՚ի նմա բովանդակի՝ յոչնչէ,
ըստ հաճութեան իւրում միայնոյ, և
ոչ ՚ի հարկէ, զի հաղորդս ա-
րասցէ զնա իւրում բարութեան։
ստեղծ և զմարդն, և առաւել
քան զամենեսին արար զնա հա-
ղորդ բարութեան իւրում, զի կեր-
տեաց զնա ըստ պատկերի և ըստ
նմանութեան իւրում, և պարգևեաց
նմա զհոգի բանական.

Հարց. Զի՞նչ ևս ուսանի ՚ի ստեղծա-
գործութեան աշխհի և մարդոյ։

Պատ. Զծայրին տնտեսութի. քանզի ած
որ գոյացոյց յոչնչէ միով բանիւ
զաշխհ ամ, և եդ ՚ի նմա զմարդն
վայելել զամ բարութի մարդա-
սիրութեան իւրոյ, հանապազ ար
թուն ականք տնօրինէ զբարուք
մատակարարութի մնց, պահե-
լով զամ իրաց զէութի և զզօրու-
թիւն. և զամ ինչ առ վախճան

բարի իմաստութեամբ իւրով ուղղէ ։ Իսկ վասն մարդոյն ունի Աստուած զյատուկ իմն տնտեսութիւն, զի զամենայն ինչ ՚ի պաշտօն նորա կարգեաց, զամենայն ինչ հնազանդ արար ընդ նովաւ, և տէր կարգեաց զնա ամենայն կենդանեաց ։

---

## Յօդուած. Գ.

## Յաղագս Աստուածպաշտութեան ։

**Հարց.** Զի՞նչ է Աստուածպաշտութիւն ։

**Պատ.** Աստուածպաշտութիւն է յայտնութիւն խոնարհութեան և հնազանդութեան մեր առաջի նորա, որ քննէ զսիրտս և զերիկամունս մեր ։

**Հարց.** Զի՞նչ ստիպէ զմեզ պաշտել զԱստուած և տալ նմա զերկրպագութիւն ։

**Պատ.** Լինելն նորա Աստուած. քանզի յորժամ հաւատամք՝ թէ Աստուած է նա, անսկիզբն, անվախճան և յաւիտենական, պարտիմք և զամենայն խորհուրդս և զգործս մեր հետևեցուցանել կամաց նորին, և պատուել զնա՝ իբրև զէակ ծայրագոյն և ամենակատար ։

Հարց ։ Զի՞նչ եւս բանադատէ զմեզ 'ի նոյն ։

Պատ ։ Նուաստութիւնք, եւ մշտնջենաւոր խնամածութիւն ։ զոր զի 'ի սկսանելն մեր զկարգս Տէրս այսորիկ, եւ 'ի նմին զբազմիցան կենդանիս եւ զպտուղս. եւ 'ի ճանաչելն՝ զի զայս ամ՝ արար ած իմաստութբ իւրով 'ի պահպանութիւն եւ 'ի սնունդ կենաց մերոց, ստիպիմք 'ի խղճէ մտաց մերոց մատուցանել նմ զպաշտօն եւ զերկրպագութիւն ։

Հարց ։ Զի՞նչ եւս առաւել քան զայսորիկ հարկադրէ զմեզ առ նոյն ։

Պատ ։ Սովորէ զմեզ պաշտել զնա՝ ակնկալութ վարձուցն հատուցման. եւ զայս ակնկալութի ունիմք աստ եւ 'ի հանդերձեալն ։ աստ 'ի կեանս յայսոսիկ՝ յորում եթէ առնեմք զբարեգործութիս ինչ, զուարճանամք հոգւով, եւ յուսամք ընդ այնր ստանալ ինչ 'ի մարդասիրութէ նո ։ եւ 'ի հանդերձեալն կեանս, յետ վախճանի

կենցաղոյս այսորիկ, յորում յու-
սամք ընդունել զկատարեալն եր-
ջանկութի̃, եթէ զամ̃ գործս մեր՝
ը̃ կամաց տն̃ տնօրինեսցուք ։

Հարց. Արդեօք այս ակնկալութիւն վար-
ձուց է՞ աներկբայ ։

Պատ. Այո՛ . քանզի սա միայն բառ-
նայ զառաքինեացն զվշտաց ծան-
րութիւն . և սա զախտակրեալսն
և զվշտագնեալսն ազատէ ՛ի յե-
տին յուսահատութէ̃ և ՛ի հողւոյ
թշուառ կորստենէ . և առանց
սորա ո՛չ ոք կարէր ծառայել
այ, և ո՛չ հաւատալ ՛ի նա . և
ո՛չ յօրինակաց նախնեաց արդա-
րոց ուսանել զհամբերութիւն
քրիստոնէական, և զերկայնմ-
տութիւն երանական ։

## ԳԼՈՒԽ Բ.

### Յաղագս Յայտնական Աստուածաբանութեան.

Հարց. Զի՞նչ է յայտնական աստուածաբանութիւն.

Պատ. Յայտնական աստուածաբանութիւն է Ա. հաւատն աւետարանական, Բ. օրէնք աստուածային, և Գ. աղօթք տէրունական:

---

### Յօդուած Ա.

### Յաղագս Աւետարանական Հաւատոյ.

Հարց. Զի՞նչ է հաւատն աւետարանական:

Պատ. Հաւատն է սրտի միօք ընդունելութիւն աւետարանին.

Հարց. Ո՞ւր աւանդել վարդապետութիւն հաւատոյն.

Պատ. Վարդապետութիւն հաւատոյն աւանդեալ է ՚ի Ս. գիրս հնոց և նորոց կտակարանաց, զոր մարգարէք և առաքեալք հոգւով ս(ր)բով գրեցին:

Հարց. Գտանի՞ արդեօք համառօտ վարդապետութիւն հաւատոյ և ո՞ւր:

Պատ. Համառօտ վարդապետութիւն



հա

հաւատոյ գտանի 'ի հանգանակի որ յառաջին կաթուղիկէ և ամեղեցական ժողովն Նիկիոյ սահմանեցաւ, և այս հանգանակ բաժանի յերկոտասան մասունս, ըստ թուոյ առաքելոցն Քրիստոսի։

Հարց։ Զինչ է հանգանակն։

Պատ։ Համառօտ բովանդակութիւն, կամ էական հաւատոյ, հաւաքեալ 'ի զանազան յօդուածոյ հաւատոյ, և առաջարկեալ հաւատացելոց իբրև նշան քրիստոնէական և ուղղափառ դաւանութեան։

Հարց։ Զիա՞րդ երգի հանգանակն։

Պատ։ Ա. Հաւատամք 'ի մի աստուած 'ի հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից։ Բ. Եւ 'ի մի տէր յիսուս քրիստոս որդին աստուծոյ, ծնեալ յաստուծոյ հօրէ, միածին՝ այսինքն յէութենէ հօր։ աստուած յաստուծոյ, լոյս 'ի լուսոյ՝ աստուած ճշմարիտ՝ յաստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։ նոյն ինքն 'ի բնութէ հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս, և 'ի վերայ երկրի՝

երևելիք և աներևոյթք· զ· Որ
յաղագս մեր մարդկան, և վասն
մերոյ փրկութե իջեալ յերկնից·
մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ
կատարելապէս 'ի մարիամայ սբյ
կուսէն հոգւովն սբվ· որով է
առ զմարմին, զհոգի և զմիտս,
և զամ որ ինչ է 'ի մարդ՝ ճշմար
տապէս և ոչ կարծեօք· է· Չար
չարեալ, խաչեալ, թաղեալ·
ը· Յերրորդ աւուր յարուցել·
թ· Ելեալ 'ի յերկինս նովին մար
մնովն՝ նստաւ ընդ. աջմէ հօր ։
ժ· Գալոց է նովին մարմնովն, և
փառօք հօր 'ի դատել զկենդա
նիս և. զմեռեալս, որոյ թագա
ւորութե ոչ գոյ վախճան· ժա· Հա
ւատամք և 'ի սբ հոգին՝ յանեղն
և 'ի կատարեալն, որ խօսեցաւ
յօրէնս և 'ի մարգարէս և յա
ւետարանս· որ էջն 'ի յորդանան
քարոզեաց զառաքեալսն· և բնա
կեցաւ 'ի սուրբս· ժբ· Հաւատամք
և 'ի միմիայն ընդհանրական և յա
ռաքելական եկեղեցի· ժգ· 'Ի մի

 մկր

մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

ԺԱ. 'Ի յարութիւն մեռելոց։

ԺԲ. 'Ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւն երկնից, և 'ի կեանս յաւիտենականս։

Հարց. Զի՞նչ վարդապետեն մեզ հանգանակն մեր հաւատոյ 'ի մասունս իւր։

Պատ. Զխորհուրդ ամենայն Երրորդութեան՝ յառաջին, յերկրորդ, և յութերորդ մասին. զմարդեղութեան բանին՝ յերրորդ. չորրորդ հինգերորդ և 'ի վեցերորդ մասունս. զուղղափառութիւն սրբոյ եկեղեցւոյ և զխորհուրդս նորա՝ յիններորդ և 'ի տասներորդ մասունս. և զգործս Այ 'ի հանդերձեալ կեանսն՝ յեօթներորդ, 'ի մետասաներորդ և յերկոտասաներորդ մասունս հանգանակի հաւատոյ։

Հարց. Զի՞նչ է խորհուրդ ամենայն Երրորդութեան։

Վարդ. : Մի ա͞ծ՝ յերիս անձինս ենթա_ կայացեալ.

Աշակ. : Զայս խորհուրդ ուստի՞ ուսաւ եկեղեցին :

Վարդ. : 'Ի սրովբէական սրբաբանութէ, զի երեք ս͞ր ասացին, և 'ի մի տէր ժողովեցին :

Աշակ. : Գտանի՞ արդեօք յերիս անձինս կարգ ինչ.

Վարդ. : Ըստ ծագմանն՝ գտանի, զի Հայր յառա՛ջ է քան զորդի, և որդի՝ քան զհոգի. Իսկ ը͞ս ժամանա_ կին՝ ո՛չ. զի ո՛չ հոգի յետոյ, կմ կրտսեր է քան զորդի. և ո՛չ որ դի քան զհայր. այլ համագոյ են երեք անձինք և զուգափառ :

Աշակ. : Ո՞ է առաջին անձն յամենասուրբ Երրորդութեան.

Վարդ. : Հայրն ա͞ծ ամենակալ, անեղ, անծին և անսկիզբն. որ 'ի յա_ ւիտենից անսկզբնաբար և ան_ վախճան ծնանի զորդի, և բղխէ զս͞ր հոգի, զփառակիցն իւր.

Աշակ. : Ո՞ է երկրորդ անձն :

Վարդ. : Որդին ա͞ծ՝ միածին և բանն և

իմաստութիւն հօր. որ նախ քան զյաւիտենական ծնանի 'ի հօրէ, և է տէրակից հօր և սր հոգւոյն.

Հարց. Ո՞վ է երրորդ անձն.

Պատ. Հոգին սր Աստուած՝ անեղն և կատարեալն, որ անժամանակաբար բղխի 'ի հօրէ, Աստուածակից գոլով որդւոյն և հօր.

Հարց. Զինչ է ըստ թուոյ անձանցն՝ բաժանել և զԱստուածութիւն, ասելով ապա երեք Աստուածք են. կամ ըստ Աստուածութեան և զանձինս մի համարել ասելով՝ թէ ապա մի անձն է:

Պատ. Ո՛չ. քանզի մի Աստուած է, և երեք անձինք. իսկ խառնել զանձինս 'ի միութիւն ըստ Աստուածութեան, է սաբելի, որպէս և բաժանելն Աստուածութեան, ըստ անձանց՝ աղանդ արիոսի. այլ պարտ է խոստովանել մի Աստուած յերիս անձինս անձնաւորաբար բաժանեալ:

Հարց. Զի՞նչ ուսուցանէ մեզ առաջին մասն հանգանակին հաւատոյ:

Պատ. Առաջին մասն հանգանակին հաւատոյ ուսուցանէ մեզ՝ թէ մի է

Աստուած ըստ էութեան՝ յերիս անձինս ան-
ճառաբար ենթակայացեալ. վասնորոյ
և ասի՝ ամենասուրբ Երրորդութիւն.
և թէ առաջին անձն սրբոյ Եր-
րորդութեան՝ հայրն Աստուած անծին և
անսկզբն ստեղծ ամենազօր մի-
ով բանիւ խորհրդով՝ ի վեց աւուրս
զամենայն երևելիս և զաներևոյ-
թս. այսինքն՝ զերկինս, զերկիր, զո-
գիս և զմարդիկ, և զամենայն բովան-
դակս և զամենայն անօրինեալ բարե-
մատակարարութեամբ խնամէ։

Հարց. Զի՞նչ ցուցանէ մեզ երկրորդ-
մասն։

Պատ. Երկրորդ մասն հանգանակի հա-
ւատոյ հաւատարիմ առնէ մեզ,
թէ երկրորդ անձն ամենասուրբ
Երրորդութեան որդին Աստուած՝ ոչ
ստեղծեալ, այլ նախքան զյա-
ւիտեանս ծնեալ է ՚ի հօրէ. հա-
մագոյ հօր ըստ Աստուածութեան. և սոյն
Աստուած Ճշմարիտ ըստ գոյութեան՝ մի ընդ
հօր՝ ստեղծ զամենայն. վասնորոյ և խոս-
տովանիմք զնա՝ էակից հօր և
փառակից հոգւոյն։

Հարց. Զի՞նչ է մարդեղութեան Քի խորհուրդ:

Պատ. Է սկզբնաւոր խորհուրդ քրիստոնէական կրօնի, որով որդին Այ անբաժանաբար էառ զճշմարիտ եւ զամբողջ բնութիւն մարդկային 'ի միութիւն անձին, առ 'ի խաղաղացուցանել չարչարանօք իւրովք, եւ հաշտեցուցանել զԱծ ը̄ ազգի մարդկան:

Հարց. Ըստի զի՞նչ իմանամք:

Պատ. Թէ բանն Այ մի անձն յամենասբ Երրորդութենէ, 'ի ժամանակի էջ յարգանդ սրբոյ կուսին Մարիամու, եւ առեալ յարենէ նր՝ զմարմին, եւ 'ի բնութէ՝ զհոգի եւ զմիտս, խառնեաց ը̄ անձին իւրում, եւ նովաւ՝ ը̄ բնութե:

Հարց. Ո՞ւր էջ, ե՞րբ եւ զիա՞րդ:

Պատ. Գթացեալ Այ 'ի պատկերն իւր՝ հաճեցաւ լինել մարդ, եւ փրկել զբնութիւն մարդկութեան յապականութենէ մեղաց. վյ եւ յորժամ լցան ամ գիրք մարգարէից՝ բանն Այ առաքեաց զհրեշտակապետն

իւր առ ո՛ կոյսն մարիամաւե-
տել նմա զգալուստ իւր · զոր
երրեւլուաւ ո՛ կոյսն և հաւա-
տայ, իսկ և իսկ ընկալաւ զհօ
գին ո՛, և յղացաւ յարգանդի
իւրում զո՛րդն մերոյ ք՛ս, որ թէ
պէտ ը՛ մարդկութեն էր յարգան-
տի մօր, բայց ը՛ ածութեն առ
հայր, և յորովայնի կուսին ·

Ջորջ: Ո՜րինչ աւետեաց կուսին հրեշ-
տակապետն :

Պօլ: Թէ ծնանելոց է քեն փրկիչն
ծի · վս և հոգին ո՛ եկեսցէ
՚ի քեզ, և զօրութի բարձրելոյ
հովանասցի ՚ի վերայ քո :

Ջորջ: Ցո՞րքան ժամանակս մնաց յար-
գանտի կուսին որդին յծ :

Պօլ: Ո՜ ինն ամիս և զաւուրս հինգ ·
յեօթանցն ապրիլի, մինչ ՚ի վե
ցըն յունվար ամսոյ ·

Ջորջ: ՚Ի լնանալ աւուրցն այնոցիկ
զի՞նչ եղև ·

Պօլ: Ծնաւ ՚ի կուսէն անձանձ միում
ած և մարդ կատարեալ · և զկնիք
կուսութեն մօրն իւրոյ անխախտ

 պա

պահեաց ։ վն զի անսերմն յղա-
ցաւ, և անապական ծնաւ ։

Հարց ։ Ո՞ւր ծնաւ ։

Պատ ։ Ի Բեթղեհէմ քաղաքի Դաւ-
թի յաշխարհին Հրէաստանի յեր-
կիրն յուդայ, ի մսուրն անբա-
նից՝ ի տեղւոջն անուանեալ
Քափրաթա ։

Հարց ։ Զի՞նչ պատահեցաւ անմիջա-
բար ի ծննդեան, կմ յետ նր ։

Պատ ։ Հրեշտակք իջին յերկնէ, և
յայտնեցին հովուաց զծնունդ նր
և աստղ յակոբայ ծագեալ յա-
րևելս էած զմոգսն յերկրպագու-
թիւն նր. և զարքայն Հրէա-
ստանի՝ զՀերովդէս շարժեաց ի
նախանձ, որ և կոտորեաց զմն
մանկունսն Բեթղեհէմի գաւա-
ռին ։

Հարց ։ Զի՞նչ են տնօրէնութիւնք Քի ի
ծննդենէ մինչև ի մկրտութիւն ։

Պատ ։ Պատիլն ի խանձարուրս և դը-
նիլն ի մսուր. կաթնասուն լի-
նելն ի կուսական ստեանց՝ ոպ
մարդ. ութօրեայ թլփատիլն,

 և

եւ անուանելն յն՝ ԺԷ կանխաբա-
նութեն մարգարէին եւ հրեշտա-
կին. քառասնօրեայ եկաւորին
՚ի տաճարն. փախչելն յեգիպ-
տոս. ըստ կանխաձայնութեն ե-
սայեայ. եւ երկոտասանամեայ
վարդապետելն ՚ի տան Տյ հօր
իւրոյ. եւ հնազանդ լինելն ծնո-
ղաց իւրոց՝ յօրինակ մեզ.

Ժողց. Օ՜ ինչ ապա առնէք յետ այնո-
րիկ.

Պատ. ՚Ի լրանալ երեսնամեայ հասա-
կին՝ գայ ՚ի յորդանան, յորում
ժամանակի եւ յովհաննէս մկրտէր
՚ի գետ անդր. եւ ՚ի վեցն յուն-
վարի՝ յորում աւուր ծնեալ էր
՚ի կուսէն, խնդրէր առ յովհան-
նէս, եւ մկրտեալ առ ՚ի նմանէ
՚ի տեղւոջն բեթաբարայ կոչե-
ցեալ, մկրտութբ վերստին ծնա-
նէր ՚ի յորդանանէ, յօրինակ
մեր յաւազանի եւ ՚ի հոգւոյ ծնն-
դեան եւ փրկութե՝ անցանելով
ըն ծով [illegible], եւ կոխելով ըզ-
գլուխ վիշապին ՚ի յատակս ջուրց

ըս̅ որս նախ տապանակն անցա-
նէր ։

Հարց. Զի՞նչ ուսանիմք յերրորդ մա-
սին հանգանակի հաւատոյ։

Պատ. Յերրորդ մասին հանգանակի հա-
ւատոյ դաւանիմք թէ որդին այ̅
ըս̅ ողորմութեան իւրում և մարդա-
սիրութեան առ մեզ մեղուցեալս
և յանցաւորս՝ եկն յերկնից,
ծնաւ հովանաւորութեամբ սրբոյ հոգ-
ւոյն 'ի կուսէն մարիամայ, ըն-
կալաւ յինքն զմարմին մարդկայ-
ին, յայտնեաց մեզ զոր կամն իւր,
եցոյց զճանապարհն փրկութեան,
և քարոզեաց զապաշխարութիւն և
զճշմարիտ ա̅ծպաշտութիւն։

Հարց. Զի՞նչ 'ի չորրորդ մասին.

Պատ. 'Ի չորրորդ մասին հանգանակի
հաւատոյ ուսանիմք՝ թէ յս̅ քս̅
որդի այ̅ 'ի ցուցանել զիւր սէր
մեծ առ մեզ, և 'ի քաւութիւն մե-
ղաց մերոց՝ չարչարեցաւ 'ի հրէ-
ից առ պոնտացւով պիղատոսիւ
որ դատաւոր էր հռովմայեցւոց
'ի հրէաստանեայս. և խաչեցաւ

՚ի նոցանէ ․ ՚ի գիշերի յաւուր
խաչելութեան իւրոյ բարձաւ ՚ի
խաչէն , և եդաւ ՚ի նորափոր
գերեզմանի ․

Հարց՝ Ո՞րն է ՚ի հինգերրորդ մասին
հանգանակի հաւատոյ ․

Պատ․ ՚Ի հինգերրորդ մասին՝ տեսա-
նեմք զի յս՟ քս՟ որդին այ՟ յերրորդ
աւուր յետ յարութե՟ իւրոյ՝ յար-
եաւ ՚ի գերեզմանէն , որպէս նոր
կիրք մեռեալ էր ․

Հարց՝ Ո՞րն է ՚ի վեցերրորդ մասին ․

Պատ․ ՚Ի վեցերրորդ մասին իմանամք
թէ յս՟ քս՟ որդին այ՟ յետ յարու-
թեան իւրոյ համբարձաւ մարմ-
նով իւրով՝ զօրութբ՟ ած՟ ծուեն
առ հայր ՚ի յերկինս , և անդ
նստի ըն՟ աջմէ հօրն երկնաւորի․

Հարց՝ Ո՞րն է յեօթներրորդ մասին ։

Պատ․ Յեօթներրորդ մասին հանգանա
կի հաւատոյ հրամայէ մեզ հաւա
տալ , թէ յս՟ քս՟ որդին այ՟ ըստ
խոստման իւրում գալոց է միւս
անգամ փառօք իբրև դատաւոր և
թագաւոր՝ յերկնէ ․ ՚ի դատել

զհեծզանս և զմեռեալս. զի ըստ
Թագաւորս, զիշխանս և զհայ-
րապետս, զհարուստս և զտնան-
կըս, զփոքունս և զմեծամեծս,
և զամենեսին առ հասարակ զամ-
մարդիկ ո՛ և իցէ չափու հասա-
կի, վիճակի և աստիճանի:

Հարց. Զի՞նչ ցուցանեն մեզ վերոյ
գրեալքն:

Պատ. Ցուցանեն՝ թէ Քս̃ 'ի մարդե-
ղութ̃ն իւրում ընտրեաց զեր-
կուս վիճակս՝ զնուաստութ̃ն և
զփառաւորութ̃ն. քանզի 'ի ծնն-
դենէ մինչև 'ի մահ՝ իբրև մարդ
շրջէր, խօսէր, առնէր և ուսու-
ցանէր, թէպէտ և ո՛չ ծածկէր
զա̃ծութ̃ին. իսկ 'ի մահուանէ
մինչև 'ի վախճան յաւիտենից,
ա̃ծաբար, ո՛չ անջատ առնելով
և զմարդկութ̃ին:

Հարց. Զի՞նչ ուսանիմք յութերորդ-
մասնէ հանգանակիս:

Պատ. Ութերորդ մասն հանգանակի
հաւատոյ պարունակէ յինքեան
զստուգութ̃ի ճշմարտութեան

հոգւոյն ա̃յ, զորմէ պա՛րտ է մեզ
հաւատալ՝ թէ ՚ի հօրէ անհա-
սանելի եղանակաւ ելանէ, և է
ա̃ծ կատարեալ ը̃ն հօր և որդւոյ
միով անորոշ երկրպագութե̃ և
պաշտամամբ պատուեալ և փառա
ւորեալ. որով մարգարէքն գուշա
կեցին, և առաքեալքն աւետա-
րանեցին. և թէ նա զա̃մ հաւա
տացեալս յեկեղեցւոջ ք̃ի հո-
գևորապէս կենագործէ.

Հարց. Ո՞ինչ իններորդ մասն.

Պատ. Իններորդ մասն հանգանակի հա-
ւատոյ վարդապետէ զխորհուրդ
ա̃յ, միոյ, կաթուղիկէ և առա-
քելական եկեղեցւոյ, որ է ժողով
հաւատացելոց քրիստոնէից՝ որոց
գլուխ մի է ք̃ս. և ինքն արե̃մբ
ք̃ե սրբեալ և փրկե̃լ, և ՚ի վար
դապետութե̃ առաքելոց և ն̃ը
ժողովոց հ̃նց անշարժ և հաս-
տատուն.

Հարց. Ո՞ինչ ՚ի տասներորդ մասին.

Պատ. ՚Ի տասներորդ մասին պարուն-
ակի վարդապետութի̃ թողութե̃

մեղաց մերոց, կամ արդարուն
մեր առաջի այ, որ լինի հաւա-
տովն 'ի քս յս փրկիչն մեր, որ
զմեզ արեամբ իւրով յամ մեղաց
մերոց սրբեաց:

Հարց. Զի՞նչ պահանջի առ քաւութե
մեղաց մերոց:

Պատ. Եօթնեակ խորհուրդ նր եկե-
ղեցւոյ. որք են՝ մկրտութիւն,
դրոշմ, հաղորդութի, ապաշխա-
րութի, պսակ, ձեռնադրութի, և
վերջին օծումն: յորոց ոմանք ան
շուշտ հարկաւոր են առ փրկու-
թիւն. ոմանք պատճառ են բա
րեպաշտութե. և ոմանք՝ պաշ-
տօնեայ այլոց խորհրդոց:

Հարց. Զի՞նչ է մկրտութիւն:

Պատ. Մկրտութիւն է խորհուրդ եկե-
ղեցւոյ, որով առ լուացմամբ մար
մնոյն ջրով՝ մաքրի և հոգի հա-
ւատացելոյն 'ի մեղաց շնորհօք
քի. ուր մկրտեալն առաջի այ
և եկեղեցւոյ նր տայ խոստումն
զկեանս այնպէս անարատ և նը
վիրել, որպ եւ յառաջանէն նը և


ան

անարատ. և յայնժամ խառնի ընդ
միաւորի 'ի ժողովս քրիստոնէ-
ից:

Հարց: 'Ի մկրտել մանկան զի՞նչ են
խորհուրդ կատարի 'ի վերայ նմա
անմիջաբար:

Պատ: Կատարին այնպիսի խորհուրդք
զորս չէ հնար, և չէ օրէն կրկ-
նել, զորօրինակ՝ զդրոշմն, և
զօծութիւն վերջին: բայց և հա-
ղորդեն զմանուկն, զոր պարտէն
հանապազ և անդադար կատա-
րել. զի խորհրդաբար է սահմա-
նեալ զոմանս միանգամ, և զո-
մանս միշտ կատարել 'ի փրկութիւն:

Հարց. Զինչ է հաղորդութիւն.

Պատ. Հաղորդութիւն է՝ յորում հա-
ւատացեալն ը տեսակաւ հացի՝
իսկական մարմնոյն քն, և ը տե-
սակաւ գինւոյ՝ ճշմարիտ արեան
քն հաղորդի՝ 'ի թողութիւն մե-
ղաց, և 'ի ժառանգութիւն կենացն
յաւիտենից. և ընկալեալ զնր
հաղորդութիւն՝ ստանայ զնորոգ
զօրութիւն և զշնորհ՝ կեալ որ և

ը քրիստոնէական օրինաց ։

Հարց. Ո՞րն է ապաշխարութիւն ։

Պատ. Ապաշխարութիւն է՝ յորում հաւատացելոյն առ կատարել զղջմամբ և խոստովանութեամբ մեղաց իւրոց, հանդերձ այնու խոստմամբ՝ զոր առնէ ինքն, զի այնուհետև կեցցէ ուղղութեամբ և բարեգործութեամբ, թողեալ լինի յայն մեղացն ’ի ձեռըն քահանայի ։

Հարց. Ո՞րն է ամուսնութիւն. կամ պսակն ։

Պատ. Ամուսնութիւն է խորհուրդ ’ի Քրիստոսէ հաստատեալ, որով մատակարարի ամուսնացելոց շնորհ սիրել զկինս, և սրբութեամբ ’ի կեր առնուլ զամուսնուն. և բարեպաշտութեամբ սնուցանել զորդիս և զզաւակս առ պաշտօն Աստուծոյ, և առ ’ի պէտս հայրենեաց ։

Հարց. Ո՞րն է քահանայութիւն ։

Պատ. Է խորհուրդ նոր օրինաց, որով շնորհի հոգևոր իշխանութիւն առն քրիստոնէի՝ ’ի կատարել զհաղորդութիւնն, և պաշտել զԱստուած

եկեղեցական պաշտամունս՝ ըստ ծիսի, և ըստ կարգի՝ ոչ ինչ թէուր եալ 'ի շաւղաց ուղղութեան ։

Հարց․ Ի՞ւ կատարի քաւութիւն մեղաց մերոց ։

Պատ․ Քաւութիւն մեղաց մերոց լինայ բարեգործութեամբ, որ գտանին հաստատեալ 'ի կատարման աստուածային օրինաց ։

Հարց․ Զի՞նչ ցուցանէ մեզ մետասաներրորդ մասն հանգանակի ։

Պատ․ 'Ի մետասաներրորդ մասին հանգանակի հաւատոյ հաւատարիմ լինել մեզ՝ թէ անշուշտ և աներկբայ լինելոց է յարութիւն մեռելոց ։ մեռեալք և կենդանիք կացցեն առաջի Աստուծոյ, և տացեն պատասխանի վասն գործոց իւրեանց ։

Հարց․ Զի՞նչ ասէ երկոտասաներորդն ։

Պատ․ Երկոտասաներրորդ մասն հանգանակի հաւատոյ ցուցանէ մեզ՝ թէ մեք ամենեքին յԱստուծոյ զկեանս յաւիտենականս և զվարձս անվախճանս ըստ գործոց մերոց ընդունելոց եմք ։ Արդարքն պա-

կեայցեն յաւիտենական երջանկու-
թեամբ. իսկ մեղաւորք պատ-
ժեսցին յաւիտենից տանջանօք.

Հարց. Արդեօք բաւակա՞ն են հաւատք
աւետարանական 'ի թողութի և
'ի քաւութի մեղաց մերոց. և 'ի
ժառանգութի մեզ երկնային և
երանաւէտ կենաց.

Պատ. Ո՛չ. քանզի առաքելակա՛ն վար-
դապետութք հաւատարիմ եղաք՝
թէ ո՛չ գոյ փրկութի հաւատով՝
առանց գործոց բարեաց. զի գործք
հոգի ամին՝ ըստ վարդապետաց.
առանց որոց մեռեալ են հաւատք.

Հարց. Ո՞ւր աւանդին պատուիրանք բա-
րեգործութե.

Պատ. Պատուիրանք բարեգործութե
աւանդեալ են յօրէնս ածայինս
որք առաջի դնեն մեզ զակնար-
կութիս կամաց նն՝ զյանձնառա-
կանս և զհրաժարականս. ցուցա-
նելով՝ թէ զո՞րս պարտ է մեզ
գործել. և յորո՞ց տեղի տալ.

# Յօդուած. Է.

## Յաղագս Ածային Օրինաց.

Հարց: Զի՞նչ աւանդի մեզ յօրէնս Ածային.

Պատ: Յածային օրէնսն աւանդին մեզ կանոնք բարեգործութե, որք բովանդակին յայսոսիկ տասն պատգամս, զորս Ած 'ի սինայ ետ մարգարէին Մովսէսի, գրեալ յերկուս քարեղէն տախտակս։

Հարց: Զի՞նչ է առաջին մասն պատգամաց Ածային օրինաց։

Պատ: Ես եմ Տր աստուածքո, և մի՛ եղիցի քեզ այլ Ած բաց յինէն. և մի՛ դիցես զանունն Այ քո 'ի վերայ սնոտեաց։ Յորմէ ուսանիմք՝ թէ պարտ է սրտիւ հաւատալ, և շրթամբք խոստովանիլ զնա միմիայն Ած. զնա միայն առաւել քան զամենայն սիրել և պաշտել և 'ի նա միայն յուսալ. ըզ հաճոյացեալսն Այ զսէրս՝ ոչ իբրեւ զԱծ, այլ իբրեւ զպաշտօնեայս և զսիրելիս Այ, և զբարեխօս առ

Տէր մեր փրկութեան մեր՝ պատուել։ սովաւ արգելու զմեզ զանձնմունս, զուրացմունս, զկախարդութիւնս, զաւելորդապաշտութիւնս, զաղանդս և զհերձուածս։

Հարց։ Օ՞ր է երկրորդ պատուիրանն։

Պատ։ Մի՛ առասցես քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան՝ յերկինս 'ի վեր, և յերկիր 'ի խոնարհ։ Որով արգելու զմեզ երկրպագանել կռոց կամ այլոց արարածոց՝ իբրև Աստուծոյ. իսկ զպատկերս սրբոց պատուել պատուելի է, այլ՝ ոչ աստուածացուցանել. զի պատկերք են միայն նմանութիւնք և յիշատակ գործոց Աստուծոյ և սիրելեաց նորա։

Հարց։ Օ՞ր է երրորդ պատուիրանն։

Պատ։ Յիշեա՛ զի սրբեսցես զօր շաբաթուն, որ մեզ կիւրակէ։ Որով հրամայէ մեզ ամ յամ կիւրակէս և 'ի տօնական աւուրս թողեալ զգործս և զպաշտամունս մեր՝ մտանել յեկեղեցի, լսել և ընթեռնուլ մատաղութիւն զհոգևոր վարդապետութիւնս, և զգու

շանալ 'ի պղծուէ̃՝ ող յա̃մ ա-
ւուրս , մանաւանդ 'ի կիւրակէս
և 'ի տօնս տէրունականս և սր̃ց,
անարգ գործովք և մանաւանդ
շնութ̃բ և արբեցութ̃բ ։

Հարց. Ո՞րինչ է չորրորդն ։

Պատ. Պատուեա՛ զհայր քո և զմայր ։
Որով հրամայէ մեզ ա̃ծ՝ զծնողսն
մեր , և այսու անուամբ՝ զթա-
գաւորս , զհոգևոր հովիւս , և
զքաղաքականս կառավարիչսն ,
զուսուցիչսն , զբարերարսն, ըզ-
տեարսն և զծերսն պատուել ,
հնազանդիլ ն̃ց ։ և օգնական լի-
նել մերձաւորին յա̃մ պէտս և
'ի կարիս՝ ը̃ս կարողութե̃ ։

Հարց. Ո՞րինչ է հինգերորդն ։

Պատ. Մի՛ սպանաներ . Յորում պահան-
ջէ 'ի մէնջ ա̃ծ՝ զի մեք ո՛չ արտա-
յուք ումեք չար ինչ, ո՛չ 'ի ձեռն
մեր , և ո՛չ 'ի ձեռն այլոց . ո՛չ
բանիւ , ո՛չ գործով և ո՛չ խորհր-
դեամբ . այլ առաւել զիւրաքան-
չիւր որք յա̃մ վտանգաց զգուշա-
ցուսցուք ։ Աւաղ՝ մեծ մեղք են

 ա

առաջի նոյ՝ զմարդ ո՛ և իցէ ե-
ղանակաւ սպանանել, կամ առ-
չար ինչ գործ վրդովել և օգնել։

Հարց. Զի՞նչ է վեցերորդն։

Պատ. Մի՛ շնար։ Սորով արգելու մեզ ըզ-
շնութիւն, զպոռնկութիւն և զամ՟
մարմնաւոր անմաքրութիւն մեղաց.
և ս և զայն՝ որ ինչ ածէ առ մե-
ղօք անմաքրութիւն մարմնոյ. յո՝
զարբեցութիւն, զդատարկապորտու-
թիւն, զհայհոյութիւն, զկաքաւ,
զզբօսանս և զերգս անհամեստս
որոց վախճան է սիրաշարժութիւն,
և կատարած նորա՝ կորուստ 'ի
հուր գեհենի։

Հարց. Զի՞նչ է եօթներորդն։

Պատ. Մի՛ գողանար։ Յորում պահան-
ջէ մեզ, զի մեք ո՛չ յայտնի, և ո՛չ
ծածուկ, յո՛չ ումեքէ և զո՛չինչ
քարշեսցուք. զգտեալ իրսն ո՛չ թա-
քուսցուք. զփախստեայսն ո՛չ
ժողովեսցուք. զայլոց անդս, զա-
գարակս կամ զայգիս ո՛չ աւար-
տեսցուք. 'ի վաճառս 'ի տուրս
և յառս՝ զոք մի՛ խաբեսցուք.

զմշակաց վարձս մի՛ զլասցուք ․
զդա՛տն արքունի և զեկեղեցւոյ
մի՛ կողասցուք , և զինչս այլոց
մի՛ երբեք խորեսցուք ։

Հարց ։ Զի՞նչ է ութերորդն ։

Պատ ։ Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ ։ Որ ուսուցանէ ո՛չ վկայել զայլմէ ումեքէ սուտ , և ո՛չ զրպարտել զոք յանիրաւի , ո՛չ չարախօսել , ո՛չ անզգամել , ո՛չ ծանակել , ո՛չ դատապարտել ըզ քան այլոց թիւր և ՚ի չարին կայս բացատրել ո՛չ մեկնել , և զգուշանալ յամ՟ ստութեց խաբէութեց և պատրանաց և ՚ի կեղծաւորութենէ ։

Հարց ։ Զի՞նչ է իններորդն ․

Պատ ․ Մի՛ երդնուցուս սուտ յանուն տն այ քո ․ Որով արգելու մեզ զանուն այ ՚ի գերև ․ այլ ներէ ՚ի կիր առնուլ միայն յաղօթս , ՚ի հարկաւոր երդմունս ․ և ՚ի խոստմունս ․ և այն և․ս մեծաւ երկիւղածութբ և կրօնաւորութբ և զգուշութբ ․ վ՟զի և մեծ մեղք են

խօսիլ ինչ ընդդէմ նոյ, հաւա-տոյ, եկեղեցւոյ, և սրբոց և քա-հանայից և եկեղեցականաց. դըր-ժել երդման և ուխտի, և ա-ռանց հարկի երդնուլ.

Հարց. Ո՞ր է տասներորդն.

Պատ. Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, և մի՛ տան նորա, և մի՛ ընչից նորա, և մի՛ ամ՛ իրաց՝ որք նորա իցեն.

Այս պատուիրան բովանդակէ ամե-նայն զհրաման հրաժեշտ տալոյ յերկուց գլխաւոր մեղաց, այն՝ 'ի շնութենէ և 'ի գողութենէ, որք ո՛չ միայն հանեն զմեզ յաչաց մարդկան, այլև Թագաւորի մե-ծի. և ապա ախնարկէ ո՛չ միայն ո՛չ առնել ումեք չարիս ինչ, այլ և ո՛չ խորհել ինչ զայնցանէ, և 'ի սիրտ մեր ո՛չ կամիլ ումեք. զի 'ի չար խորհրդոց կարի դիւ-րու՛ք վաղվաղակի և հեշտեա-կարէ ընդելնել գործ չար. մ՛ զի զոր ինչ խորհի ոք, զնոյն խօսի բերան նորա, և 'ի նոյն միտեն ըզ-գայարանք, թէ 'ի բարիս և թէ

 'ի

'ի չարիս․ սաստի և զգուշացու-
ցանէ սանձել զմասն ցանկակա-
նին, զի նուազ և այլ մասունք
նուաճեսցին ։

Հարց ։ Ե՞ն արդեօք այլ ևս բարեգոր-
ծութիւնք բաց 'ի նոցանէ, որք 'ի
տասնաբանեայ պատուիրանն գրին ։

Պատ ։ Այո․ քանզի են եօթն գլուխ ա-
ռաքինութեանց․ և եօթն գլուխ ո-
ղորմութեանց․ Է որս են աղօթքն
և պահքն ։

Հարց ։ Զի՞նչ են պահք ։

Պատ ։ Պահք են ժուժկալութիւն 'ի
մարմնական հեշտութեանց, 'ի մո-
լութեանց, 'ի մեղաց, և յայնցանէ
բնաւից՝ որ առիթ մեղաց լինին
մարդկան․ որոց կատարածն հայէ
'ի յատակս դժոխոց, 'ի լինել
մարդոյ կերակուր անքուն որ-
դանց ։

## Յօդուած Գ.

## Յաղագս Տէրունական Աղօթից.

Հարց. Զի՞նչ և՛ս խնդրի առ լրութին պատգամաց Այ.

Պատ. Ըստ լրութն պատուիրանաց Այ պահանջի և զուղղընթացութիւններ գործումն շնորհաց Այ, որք ի վեր այլոց բարեաց ստացեալ լինին եռանդուն աղօթիւք.

Հարց. Զի՞նչ է աղօթք.

Պատ. Աղօթքն է ամբարձումն մտաց և սրտից մերոց առ Ած, խնդրել յոլով ՚ի նմանէ զբարիս յօգուտ հոգւոց մերոց. այլ թէ զիա՞րդ պարտ է աղօթել՝ աւանդեալ է ՚ի տէրունական աղօթս.

Հարց. Զիա՞րդ երգի տէրունական աղօթք.

Պատ. Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութին քո. եղիցին կամք քո՝ որպ յերկինս և յերկրի. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր՝

ողջ և մեք թողումք մերոց պար-
տապանաց․ և մի՛ տանիր զմեզ
՚ի փորձութիւն․ այլ փրկեա՛ զմեզ
՚ի չարէ․ զի քո է արքայութիւն և
զօրութիւն և փառք յաւիտեանս․
ամէն ։

Հարց․ Աղօթք Տէրունական ՚ի քանի՞ մասունս բաժանին և յի՞նչ ։

Պատ․ ՚Ի նախերգանս, յեօթն խնդրուածս, և ՚ի վերջաբանութիւն ։

Հարց․ Զի՞նչ է նախերգանքն Տէրունական աղօթից ։

Պատ․ Նախերգանքն է՝ ( Հայր մեր որ յերկինս ես)։ Յայսոսիկ բանըս ուսուցանէ մեզ փրկիչն լինել երկիւղած յայ․ ոչ իբրև ծառայ, այլ՝ իբրև որդի․ և մտածել առնա գեղեցիկ համարձակութեամբ․ զի ած է մեր հասարակաց հայր, և մեք հաւատացեալքս՝ եղբարք միմեանց․ և չէք խոհիլ՝ ըստ առաքելոյն, ոչ հրէի, և ոչ հեթանոսի, եթէ հաւատան ։

Հարց․ Զի՞նչ է առաջին խնդրուածն ։

Պատ. Սբ եղիցի անուն քո. Որ մեք խնդրեմք անուան նր լինել սբ. զի նա սբ լինի 'ի մէնջ և 'ի ձեռըն մեր. Սբ լինի 'ի մէնջ անուն այ, յորժամ մեք կեամք ըս պատուիրանաց նր և ըս կամաց: իսկ 'ի ձեռն մեր յայնժամ՝ յորժամ մեք ածահաճոյ վարուք մերովք, և բարի օրինակաւ՝ զայլ ժողովուրդս ածեմք 'ի փառաբանութիւն անուան հօրն երկնաւորի.

Հարց. Զ՞ինչ է երկրորդ աղաչանքս.

Պատ. Եկեսցէ արքայութիւն քո. Յորում բանի աղաչեմք՝ զի եղիցի ընդ մեզ շնորհն այ զամ աւուրս կենաց մերոց. և զի կեցեալ առաքինական վարուք՝ յաւիտենական երջանկութեան արժանի եղիցուք՝ ը սբս յարքայութեան երկնից՝ ը խնկինեօք.

Հարց. Զ՞ինչ է երրորդ պաղատանքս.

Պատ. Եղիցին կամք քո՝ որպ յերկինս և յերկրի. Սմա պաղատիմք՝ զի տացէ մեզ զօրութիւն՝ յամ ժամ և



ամ

ա՟մ ուրեք զկամս հօրն երկնաւո-
րի կատարել. և զկամս մեր՝ նո-
րին ը՟ս կամաց ա՟ծուն հնազանդ-
առնել. և ո՟պ հրեշտակք յեր-
կինս փառաւորեն զնա անդա-
դար, և մեք յերկրի աստ 'ի
տուէ և 'ի գիշերի զա՟ծն ս՟րց
արժանապէս փառաւորել:

Հարց. Զի՞նչ է չորրորդ հայցուած.

Պատ. Զհաց մեր հանապազորդն տուր
մեզ այսօր. Որով բանիւ հայ-
ցեմք՝ զի հայրն երկնաւոր տացէ
մեզ զօրհանապազ զհարկաւորն
առ ժամանակաւոր կեանս մեր
յայս՝ զկլխոյան. առատացու-
ցէ զպտղաբերութիւն երկրի. և օրհ-
նեսցէ զա՟մ աշխատութիւնս մեր, և
զգործս ձեռաց մերոց ուղղեսցէ.

Հարց. Զի՞նչ է հինգերորդ աղերս:

Պատ. Թող մեզ զպարտիս մեր, որպէս և
մեք թողումք մերոց պարտապա-
նաց: Սոքիւ մեք զուցե՟լ յա՟մ ժամ՝
աղերսեմք, զի հայրն երկնաւոր
ողորմեսցի մեզ. և ներեսցէ կա-
մաց և ակամայ յանցուածոց մե-

 րոց

րոց, այնպէս՝ ինչ և մեք կամիմք
թողուլ յօտարացս զնոյն զերկանս
զորս այլք արարին մեզ.

Հարց. Ո՞րն է վեցերորդ մաղթանքն.

Պատ. Եւ մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն։
Յորում մաղթեմք՝ զի Հայրն երկ-
նաւոր դարձուսցէ ՚ի մէնջ զամ
փորձանս, որք կարեն դրդուե-
ցուցանել զհաւատ մեր և զյոյս՝
որ առ նա։

Հարց. Ո՞րն է եօթներորդ խնդիրն.

Պատ. Այլ փրկեա զմեզ ՚ի չարէ. Ո-
րով աղաչեմք՝ զի Հայրն երկնա-
ւոր փրկեսցէ զմեզ յամ մեղաց,
և յամ դիպուածոյ՝ որք շարժեն
զմեզ առ մեղս։

Հարց. Ո՞ր ինչ է վերջաբանութիւն տէ-
րունական աղօթից.

Պատ. Ո՛րքո է արքայութիւն, և զօրութիւն
և փառք՝ յաւիտեանս. ամէն։
Եւ այս վերջաբանութիւն բովան-
դակէ յինքեան զհաւատս մեր,
և զհաստատութիւն յուսոյ մերոյ.
զի հաւատամք՝ թէ Հայրն երկ-
նաւոր՝ որպէս ամենազօր, զամ
կա

կարէ. և յուսամք թէ նա՝ որ ամենաբարի, զա̃մ բարիս տայցէ մեզ:

Հարց: Քանի՞ են պահանջքն առ ճշմարիտ աղօթսն:

Պատ: Երկու. մի՝ մտադրութի̃. և բարի ախորժակ կամաց և ճշմարիտ եռանդն ընդունելոյ զհայցուածս:

Հարց: Ե՞րբ և քանի՞ցս ստիպէ հրամանն աղօթել:

Պատ: Միշտ և անդադար. քանզի ինքն Քն̃ ասաց հրամայելով, և ո՛չ խրատելով, թէ պա՛րտ է յա̃մ ժամ յաղօթս կանխել, և մի՛ երբէք ձանձրանալ:

Հարց: Քանի՞ պատիկ է աղօթքն:

Պատ: Երկկին մտաւոր և ձայնաւոր:

Հարց: Զի՞նչ է աղօթքն մտաւորական:

Պատ: Է ուշադիր հետազօտութի̃ ճշմարտութե̃՝ յեռանդն ջերմեռանդութեան:

Հարց: Զի՞նչ է աղօթքն ձայնաւոր:

Պատ: Է նոյն իսկ աղօթքն մտաւորական առանձին կմ̃ հրապարակամատուցեալ ո̃յ յեկեղեցւոջ:

[illegible]

Ա. ԱԾ բարերար հզօր ահաւոր, հայրդ բարի՝ ողորմութեամբ շնորհի, որոյ անունդ իսկ միայն՝ զգթութիւն և զընտանութիւն աւետարանէ, քաղցր դժնէից և անգոհացողաց։ Ընդ քեզ և որդւոյ քո՝ իբրև զքեզ, զօրաւոր ձեռն՝ իբրև զքեզ, անժամանակ տէրութբ ահեղ՝ ամ արարչութեամբ քում բարձրացեալ։ Եւ հոգւոյդ որ ճշմարտութեան՝ բղխեալ առ 'ի քէն անսպառութեամբ, կատարեալ իսկութիւն գոյի, էութեան մշանջենաւոր, հաւասարք նմին, փառակիցք որդւոյ քոյ տէրութբ. Երրեակ անձնաւորութիւն համայն անքննելի, տրոհեալ 'ի դիմաց՝ ուրոյն զատուցմամբ, իսկ միաւորեալ համագոյութբ՝ նոյնագոյ բնութբ տիրապէս՝ անշփոթ և անանջրպետ՝ միով կամօք և կարողութբ. ո՛չ երկութբ ումեմն 'ի յումեմն, և ոչ քթթել մի ական առ նուազութի միոյն ժամանեալ,



քան

քան թէ պատճառ սիրոյ երկնայնոյ ան-
սատուեր լուսոյ՝ որ առ Տէրն է ծանօթու-
թիւն, միով պայծառ սրբատացութեան՝
անսկզբնաբար ա՛ծաբանին։ Քանզի ար-
դարև վերաձայնեալս այս խոստովանու-
երեքփառատրեանց դաւանաւն՝ զմէն
հաւատոյ պիտոյս երանեաց. իսկ զգաստա
պարախլյս անձն մերոյ՝ բարեհրաման
քո ակնարկութ, ո՛վ խնդրողդ գերելյս՝
հրաշունորդ արդարացուսցէ։ Քանզի
թէ պէտ և քո իցեն պարգևք՝ և քո ողոր
մութիւք, այլ ո՛չ՚ի պարգևսն եւ այնքան
հաշտեալ, որքան յողորմութեն. զի երկ
րորդն՝ գքոյդ յաճախէ զփառս, իսկ ա-
ռաջինն՝ զձղնաւորացն յայտնէ զգործս.
զի պարգևք՝ վաստակոցն են փոխատրու
թիւնք, իսկ ողորմութիւք՝ մեղուցելոյս
բարերարութիւնք.

Է. Եւ արդ՝ մի՛ զօրացյեն մարդկայինս
գործք առաջի քոյոյդ շնորհաց՝ ա՛ծ զը-
թութեանց, թէ և անդր իսկ իցեն քան
զօրէնս հասարակաց՝ բնաւորականս հոս
մանց, այլ յաղթող եղեալ քոյդ երկայն
մտութեն, նուազ եղիցի առ քումդ մա-
սին ընթացք երկրածնաց։ Քանզի և որ

 մոք

մաքրութեան սրբազանագոյն օրինականացն պատուհասէք, 'ի լուսաւորել քոյդ արդարութեան գուշակ ներկայիս, ամենանուազ անձկութեան լքեալ հրէութեան՝ յետնեալ, և յաւէտ ընդ տարադրական ողորմելոյն, առաւել նոքա դատան կարօտեալ մարդասիրութեան: Ու քանզի ամենայն ինչ հնարաւոր է քեզ՝ բարերար, լո՛ւր պաղատանաց պոչման հեծութեան՝ որ կարդամս առ քեզ. ողորմեա՛, կեցո՛, և մարդասիրեա՛։ Զի քո է երկրպագութի, քաղցրութի, փրկութի, քաւութի, և փառք յամենեցունց՝ յաւիտենանց ազգաց. ամէն։

ԱՐԽՃՐՆ.

## Սխալք հանդիպեալք տպագրութեան

| Եր. | Գիծ. | Հանդիպեալք. | Ուղղագրեալք: |
|---|---|---|---|
| 8. | 6. | բանահիւսիւն. | բանահիւսութիւն: |
| 10. | 15. | զինչ. | զի՞նչ: |
| | | ը տառ ոմանց դասականաց ա- ւելի է: | |
| 21. | 12. | քէն. | ՚ի քէն: |
| 27. | 6. | պաշտամամբ. | պաշտաման՛ամբ: |
| 28. | 25. | վարիլ. | վարել: |
| 29. | 11. | պարտէն. | պա՛րտ է: |

29703-63

૨૭૫
૧૫૧